ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# «ՇՏԱՊԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

№ 1043

«16» 12 2014 թ.

Ք. Երևան, Զորափի 40

Հեռ.՝ 53-66-12, ֆաքս՝ 53-92-53

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/3» ծածկագրով
ընթացակարգի հրավերի

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/3» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ծառայություն (ներ):
Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում **«ՇԲՕ-15/4-ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/3»:**

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք.Երևան, փ. Զորափի 40 հասցեով, մինչև **2014թ. դեկտեմբերի 25-ը, ժամը 10:00-ն**: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Լեոնիկ Ալեքսանյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի շենքում, ք.Երևան, փ. Զորափի 40 հասցեով, **2014թ. դեկտեմբերի 25-ին, ժամը 10:00-ին**:

Գնման առարկա է հանդիսանում «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի կարիքների համար՝ **«տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և վերանորոգման»** ծառայությունների ձեռքբերումը:

«Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի կարիքների համար՝ **«տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և վերանորոգման»** ծառայությունների մատուցման (որոնք կազմված են 4 չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) **N3 Հավելվածում**:

Մասնակիցները հայտով ներկայացնում են[1] իրենց կողմից հաստատված՝

**ա.** գնման ընթացակարգին մասնակցելու դիմում **(Հավելված N 1)**, ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

**բ.** գնային առաջարկ **(Հավելված N 2):** Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով: Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը, ընդ որում, ընտրված (առաջին տեղ զբաղեցրած) մասնակիցը պարտավոր է ծանուցումը (պայմանագիր կնքելու առաջարկը) ստանալուց հետո 5 օրացուցային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում և ստորագրելու գնման պայմանագիրը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

«Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ **emergency103@gmail.com**:

Հարգանքով՝
«Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի տնօրեն՝ Թագուհի Ստեփանյան

---

1 Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, ՀՀ նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ/ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ/ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ/ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև Կարգի 110-րդ կետի 7-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ/ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և Կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով ՀՀ նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին՝ ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ/ տվյալները: